«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ

Ֆիանանսական հաշվետվություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարվա համար

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010
Վ. Սարգսյան փ. 26/1
«Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 595 999
Կայք www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ Բաժնետերերին և Տնօրենների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ-ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2023թ., այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերը և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ՖՀՄՍ ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների (ՖՀՄՍ ֆինանսական հաշվետվությունների ստանդարտներ) համաձայն:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ ներկայացված է մեր եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (*ՀԷՄՍԽ կանոնագիրք)* և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և կատարել ենք էթիկայի պահպանման մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՍԽ կանոնագրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանքներ

Ընկերության 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որն արտահայտել է չձևափոխված կարծիք այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2023թ. ապրիլի 28-ին:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն կամ չունի դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտի ընթացքում միշտ կհայտնաբերվի էական խեղաթյուրումը, երբ առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:

- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- գնահատում ենք կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ հանգամանքները հետ կապված, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզանից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին կամ, եթե այդ բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Ընկերության կողմից անընդհատության հիմունքով գործունեությունը շարունակելու դադարեցմանը:

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու գործընկերն է՝

Իրինա Գևորգյան
Ղեկավար գործընկեր, «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի տնօրեն

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
22 ապրիլի 2024թ.

«ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ»
«KPMG ARMENIA»
02529689

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
առ 31 դեկտեմբերի 2023թ.

հազ. դրամ	**Ծնթգ.**	**31 դեկտեմբերի 2023թ.**	**31 դեկտեմբերի 2022թ.**
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5	94,346	24,649
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	6	2,052,954	1,624,416
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	7	1,520,541	1,321,606
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	8	150,710	26,363
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	9	63,499	108,778
Հետաձգված հարկային ակտիվներ	10	11,589	9,086
Այլ ակտիվներ	11	420,289	301,408
Ընդամենը ակտիվներ		**4,313,928**	**3,416,306**
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ և պահուստներ			
Կանոնադրական կապիտալ	12	800,000	800,000
Գլխավոր պահուստ		205,343	130,308
Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ		537,909	349,038
Չբաշխված շահույթ		2,084,704	1,500,703
Ընդամենը սեփական կապիտալ		**3,627,956**	**2,780,049**
Պարտավորություններ			
Վարձակալության գծով պարտավորություններ	9	78,505	117,236
Վճարվելիք շահութահարկ		417,304	296,100
Վճարվելիք գումարներ և հաշվեգրված ծախսեր	13	190,163	222,921
Ընդամենը պարտավորություններ		**685,972**	**636,257**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**4,313,928**	**3,416,306**

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 10-ից 34-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազ. դրամ	**Ծնթգ.**	**2023թ.**	**2022թ.**
Եկամուտ կառավարման վճարներից	14	3,858,149	2,906,850
Տոկոսային եկամուտ		121,328	92,664
Եկամուտ ֆինանսական խորհրդատվությունից		24,890	20,246
Այլ եկամուտ		1,539	1,707
Զուտ վնաս արտարժույթով գործառնություններից		(2,053)	(12,990)
Տոկոսային ծախս վարձակալության գծով պարտավորությունների գծով	9	(12,453)	(16,068)
Անձնակազմի գով ծախսեր	15	(289,911)	(187,793)
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս	16	(578,805)	(499,171)
Վարչական և այլ ծախսեր	17	(546,794)	(451,239)
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը		**2,575,890**	**1,854,206**
Շահութահարկի գծով ծախս	10	(491,186)	(353,503)
Տարվա շահույթ		**2,084,704**	**1,500,703**
Այլ համապարփակ եկամուտ/(վնաս)			
Հոդվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս			
Չիրացված օգուտ/(վնաս) իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումների գծով		188,871	(108,401)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական եկամուտ/(վնաս)՝ առանց շահութահարկի		**188,871**	**(108,401)**
Տարվա շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ		**2,273,575**	**1,392,302**

Այս ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2024թ. ապրիլի 22-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Ժան Սազեջյան
Գործադիր տնօրեն

Միսակ Իսաջանյան
Գլխավոր հաշվապահ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 10-ից 34-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազ. դրամ	Կանոնադրական կապիտալ	Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ	Գլխավոր պահուստ	Չբաշխված շահույթ/ (վնաս)	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	800,000	457,439	72,326	1,159,626	2,489,391
Տարվա շահույթ	-	-	-	1,500,703	1,500,703
Փոխանցում գլխավոր պահուստ	-	-	57,982	(57,982)	-
Այլ համապարփակ վնաս	-	(108,401)	-	-	(108,401)
Հայտարարված շահաբաժիններ	-	-	-	(1,101,644)	(1,101,644)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**800,000**	**349,038**	**130,308**	**1,500,703**	**2,780,049**
Տարվա շահույթ	-	-	-	2,084,704	2,084,704
Փոխանցում գլխավոր պահուստ	-	-	75,035	(75,035)	-
Այլ համապարփակ եկամուտ	-	188,871	-	-	188,871
Հայտարարված շահաբաժիններ	-	-	-	(1,425,668)	(1,425,668)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	**800,000**	**537,909**	**205,343**	**2,084,704**	**3,627,956**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 10-ից 34-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազ. դրամ	Ծնթգ.	2023թ.	2022թ.
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից			
Շահույթ մինչև հարկումը		2,575,890	1,854,206
Ճշգրտումներ հետևյալ հոդվածների գծով			
Մաշվածություն	17	43,022	35,544
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների (արժեզրկման հակադարձում)/արժեզրկում	17	(1,908)	3,512
Ստացվելիք տոկոսներ		(18,957)	(13,712)
Տոկոսային ծախս վարձակալության գծով պարտավորությունների գծով	17	12,453	16,068
Զուտ կորուստ փոխարժեքային տարբերություններից		4,962	8,099
Հիմնական միջոցների դուրսգրում		335	1,217
Դրամական հոսքերը գործառնական գործունեությունից՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունները		**2,615,797**	**1,904,934**
Գործառնական ակտիվների զուտ (աճ)/նվազում			
Այլ ակտիվներ		(117,457)	(56,034)
Գործառնական պարտավորությունների զուտ աճ/(նվազում)			-
Այլ պարտավորություններ		(38,572)	74,432
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ՝ մինչև շահութահարկի վճարումը		**2,459,768**	**1,923,332**
Վճարված շահութահարկ		(375,583)	(281,357)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ		**2,084,185**	**1,641,975**
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից			
Բանկերում տեղաբաշխված ավանդներ		(1,920,912)	(1,515,837)
Մուտքեր բանկերում տեղաբաշխված ավանդներ		1,512,395	774,353
Վճարումներ ֆոնդերում փայերի համար		(10,064)	-
Հիմնական միջոցների ձեռքբերում		(138,357)	(4,192)
Ներդրումային գործունեության համար օգտագործված դրամական միջոցներ		**(556,939)**	**(745,676)**
Դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
Բաժնետերերին վճարված շահաբաժիններ	12	(1,425,668)	(1,101,644)
Վարձակալության գծով պարտավորության հիմնական մասի վճարում	23	(22,799)	(21,936)
Վարձակալության գծով պարտավորության տոկոսի վճարում	23	(12,453)	(16,068)
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ		**(1,460,920)**	**(1,139,648)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)		**66,391**	**(243,349)**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ		24,649	282,054
ՖՀՄՍ 9-ի կիրառման հետևանքները	5	12	242
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		3,358	(14,298)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ	5	**94,346**	**24,649**
Լրացուցիչ տեղեկատվություն			
Ստացված տոկոսներ		102,488	63,391

Դրամական հոսքերի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 10-ից 34-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ծանոթագրություն	Էջ
1. Հաշվետու կազմակերպություն	11
2. Պատրաստման հիմունքներ	12
3. Գնահատումների և դատողությունների օգտագործում	12
4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասեր	13
5. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	19
6. Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	19
7. Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	20
8. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	21
9. Վարձակալություն	22
10. Շահութահարկ	23
11. Այլ ակտիվներ	24
12. Կանոնադրական կապիտալ	25
13. Վճարվելիք գումարներ և հաշվեգրված ծախսեր	25
14. Եկամուտ կառավարման վճարներից	26
15. Անձնակազմի գծով ծախսեր	26
16. Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախսեր	26
17. Վարչական և այլ ծախսեր	27
18. Հանձնառություններ և պայմանական դեպքեր	27
19. Ֆինանսական գործիքների իրական արժեք	28
20. Կապիտալի ռիսկի կառավարում	28
21. Ֆինանսական ռիսկերի կառավարում	29
22. Կապակցված կողմեր	32
23. Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների համադրում	33
24. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ	34

1. Հաշվետու կազմակերպություն

(ա) Կառուցվածքը և գործունեությունը

«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) հիմնվել է 2013թ-ին: Ընկերության գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության (ՀՀ) օրենսդրությամբ: Ընկերությունը գրանցվել է 2013թ. նոյեմբերի 19-ին ՀՀ կենտրոնական բանկի կողմից՝ ստանալով գրանցման վկայական թիվ 2:

Ընկերությունը կառավարող մարմիններն են՝ Բաժնետերերի ընդհանուր ժողովը, Տնօրենների խորհուրդը և Գործադիր տնօրենը, որի պաշտոնը զբաղեցնում է Ժան Մազեջյանը:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վ. Սարգսյան փ. 10: 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ուներ 10 աշխատակից (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝10 աշխատակից):

Ընկերության հիմնական գործունեությունը պարտադիր կուտակային կենսաթոշակային ֆոնդերի կառավարումն է: «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտադիր կուտակային վճարներ կատարելու պարտավորությանը վերաբերող դրույթներն ուժի մեջ են մտել 2014թ. հունվարի 1-ից, հետևաբար Ընկերությունն իր հիմնական գործունեությունը սկսել է 2014թ. հունվարի 1-ից:

Ընկերության բաժնետերերն են՝ «Ամունդի Ասեթ Մենեջմենթ» ԲԸ-ն (Ֆրանսիա) (51%) և «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ-ն (Հայաստան) (49%): Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 12-ում:

Ընկերության վերջնական հսկող կողմն է SAS RUE LA BOETIE:

Ընկերության կառավարման ներքո գտնվում են հետևյալ երեք պարտադիր կենսաթոշակային ֆոնդերը.

- «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ կայուն եկամտային կենսաթոշակային ֆոնդ,
- «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ պահպանողական կենսաթոշակային ֆոնդ,
- «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ հավասարակշռված կենսաթոշակային ֆոնդ:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Համապատասխանաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որին բնորոշ է զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

Բացի այդ, 2020թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղում բռնկված զինված հակամարտությունը, որին հաջորդեց հրադադարի մասին համաձայնագիրը Լեռնային Ղարաբաղի վիճելի տարածքների շուրջ, հանգեցրեց սոցիալական հուզումների Հայաստանում: Չնայած հրադադարի մասին համաձայնագրի, Հայաստանի և Ադրբեջանի զինված ուժերը ներքաշվել էին սահմանային բախման մեջ, ինչն իր հերթին մեծացրեց անորոշությունը գործարար միջավայրում: 2023թ. սեպտեմբերին Ադրբեջանի ռազմական ուժերը սկսեցին նոր ռազմական գործողություն, որի հետևանքով Լեռնային Ղարաբաղի բնակչությունը ստիպված էր լքել իր բնակավայրը և տեղափոխվել Հայաստան՝ Ադրբեջանին թողնելով հսկողությունը տարածքի նկատմամբ:

2022թ. փետրվարին Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև բռնկված ռազմական հակամարտության պատճառով մի շարք երկրներ պատժամիջոցներ սահմանեցին Ռուսաստանի Դաշնության նկատմամբ: Հակամարտությունն ազդեցություն ունի ոչ միայն երկու երկրների տնտեսական գործունեության, այլև՝ համաշխարհային տնտեսության վրա: Պատժամիջոցների արդյունքում աշխարհի շատ երկրներում հումքային և պարենային ապրանքների գներն աճել են, խախտվել են ռեսուրսների մատակարարման հաստատված կապերը, դիտվում է գնաճի ազդեցություն

գների վրա, և վերլուծաբանները կանխատեսում են նաև տնտեսական հետևանքներ համաշխարհային արդյունաբերության համար:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2. Պատրաստման հիմունքներ

(ա) Համապատասխանության հավաստում

Ներկայացված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ՖՀՄՍ ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների (ՖՀՄՍ ֆինանսական հաշվետվությունների ստանդարտներ) համաձայն:

(բ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը Ընկերության ֆունկցիոնալ արժույթն է և այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ:

3. Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների պահանջներին համապատասխան կազմելու համար ղեկավարությունից պահանջվում է կատարել դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների և ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում: Գնահատումները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների, այդ թվում՝ ապագա իրադարձությունների հետ կապված ակնկալիքների վրա, որոնք համարվում են ողջամիտ համապատասխան հանգամանքներում: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառելիս ղեկավարությունը, բացի գնահատումներից, կատարում է նաև որոշակի դատողություններ:

Դատողությունները և գնահատումները, որոնք նշանակալի ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, և գնահատումները, որոնք կարող են հանգեցնել ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտման հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում, վերաբերում են ֆինանսական գործիքների հաշվառմանը, մասնավորապես՝ իրական արժեքի չափմանը (Ծանոթագրություն 18): Իրական արժեքի լավագույն ապացույցը գործող շուկայում գնանշված գինն է: Գործող շուկայում գնանշված գնի բացակայության դեպքում ղեկավարությունը կիրառում է գնահատման այլ մեթոդներ, օրինակ՝ համեմատական մոտեցումը՝ կատարելով համեմատություն նմանատիպ գործիքների հետ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում:

Իրական արժեքի չափում

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս Ընկերությունը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտելի շուկայական տվյալները: Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների՝ հիմք ընդունելով գնահատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև:

- *1-ին մակարդակ.* նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտվող):
- *2-րդ մակարդակ.* 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից տարբեր ելակետային տվյալները, որոնք ակտիվի կամ պարտավորության համար դիտելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գներից ստացվող):

– *3-րդ մակարդակ.* ակտիվի կամ պարտավորության ելակետային տվյալները, որոնք հիմնված չեն դիտելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտելի ելակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործված ելակետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակներում, իրական արժեքի չափումն որպես մեկ ամբողջություն դասակարգվում է իրական արժեքի հիերարխիայի այն նույն մակարդակում, որտեղ դասակարգվում են ամենացածր մակարդակի տվյալները, որոնք նշանակալի են ամբողջ չափման համար:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասեր

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

Ընկերությունը կիրառում է *«Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումը» (ՀՀՄՍ 1-ի և ՖՀՄՍ վերաբերյալ գործնական առաջարկներ 2-ի փոփոխություններ)* 2023թ. հունվարի 1-ից: Թեև փոփոխությունները չեն հանգեցրել որևէ փոփոխության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում, դրանք ազդեցություն են ունեցել ֆինանսական հաշվետվություններում հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ բացահայտված տեղեկատվության վր

Փոփոխությունները պահանջում են բացահայտել հաշվապահական հաշվառման «էական», այլ ոչ «նշանակալի» մասերը: Փոփոխությունները ներառում են նաև ուղեցույց հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտման հետ կապված էականության հասկացության կիրառման վերաբերյալ՝ օգնելով կազմակերպություններին տրամադրել կազմակերպությանը հատուկ հաշվապահական հաշվառման քաղաքականությանը վերաբերյալ օգտակար տեղեկատվություն, որն անհրաժեշտ է օգտագործողներին ֆինանսական հաշվետվություններում ներառված այլ տեղեկատվությունը հասկանալու համար:

Ղեկավարությունը վերանայել է հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և թարմացրել է Ծանոթագրություն 4-ում՝ «Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասեր» (2022թ-ին՝ «Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասեր») բացահայտված որոշակի տեղեկատվությունը՝ փոփոխություններին համապատասխան:

(ա) Պատրաստման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների, ինչպես բացատրվում է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունում:

(բ) Եկամուտի ճանաչում

Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն, և եկամուտը հնարավոր է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Ընկերությունից, և ծախսը հնարավոր է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է բավարարվեն մինչև եկամտի ճանաչումը:

Տոկոսային եկամուտ և ծախս

Բոլոր տոկոսակիր ֆինանսական գործիքների գծով տոկոսային եկամուտները և ծախսերը, բացառությամբ այն ֆինանսական գործիքների, որոնք դասակարգված են որպես առևտրական նպատակներով պահվող կամ նախորոշված են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, ճանաչվում են «տոկոսային եկամտի» և «տոկոսային ծախսի» կազմում շահույթի

կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եթե ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի հաշվեկշռային արժեքը նվազում է արժեզրկումից կորուստների պատճառով, Ընկերությունը շարունակում է ճանաչել տոկոսային եկամուտը՝ կիրառելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը նոր հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Ֆոնդերի կառավարման վճարներ

Ֆոնդի կառավարումից ստացվող եկամուտը ճանաչվում է որպես վաստակած եկամուտ, հիմք ընդունելով եկամուտի այն գումարը, որն Ընկերությունն իրավասու է ստանալ ժամանակաշրջանի համար: Ֆոնդի կառավարման վճարը հաշվարկվում է հիմք ընդունելով կառավարվող ֆոնդերի զուտ ակտիվների արժեքի նկատմամբ կիրառելի վճարների պայմանագրային դրույքները:

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ

Վճարները, միջնորդավճարները, այլ եկամուտները և ծախսերը որպես կանոն ճանաչվում են հաշվեգրման հիմունքով՝ ծառայությունների մատուցման ընթացքում:

(գ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված դրամական միջոցները և դրանց համարժեքներն իրենցից ներկայացնում են բանկերում պահվող դրամական միջոցները՝ երեք ամիս կամ պակաս ժամկետայնությամբ, որոնք կարող են փոխարկվել կանխիկի կարճ ժամանակահատվածում:

(դ) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված հոդվածներին:

(i) Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը հարկի այն գումարն է, որն ակնկալվում է վճարել կամ ստանալ տարվա հարկվող եկամտի կամ վնասի գծով՝ կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ներառում է նախորդ տարիների համար վճարման ենթակա հարկի գծով ճշգրտումները:

(ii) Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկ չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման ժամանակ բիզնեսի միավորում չհանդիսացող գործարքի արդյունքում, որն ազդեցություն չունի ոչ հաշվապահական և ոչ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվներ ճանաչվում են չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային գեղչերի և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որով հավանական է, որ Ընկերությունն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այն չափով, որով այլևս հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի:

Չճանաչված հետաձգված հարկային ակտիվները վերագնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճանաչվում են այն չափով, որով հավանական է դարձել, որ Ընկերությունն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել:

Հետաձգված հարկը չափվում է օգտագործելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկի չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կառաջանան կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Ընկերությունն ունի ընթացիկ հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, որոնք մտադիր են կամ մարել ընթացիկ հարկային պարտավորությունները և ակտիվներ զուտ հիմունքով, կամ իրացնել հարկային ակտիվները և մարել հարկային պարտավորությունները միաժամանակ:

(ե) Ֆինանսական գործիքներ

(i) Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

Սկզբնական ճանաչում

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների բոլոր կանոնավոր կերպով գնումները ճանաչվում են առևտրի ամսաթվին, այսինքն՝ այն ամսաթվին, երբ Ընկերությունը հանձնառություն է ստանձնում գնել ակտիվը կամ պարտավորությունը: Կանոնավոր կերպով գնումը կամ վաճառքը ֆինանսական ակտիվի կամ պարտավորության գնումն է կամ վաճառքն է համաձայն պայմանագրի, որի դրույթները պահանջում են այդ ակտիվի և պարտավորության հանձնումը՝ տվյալ շուկայում սովորական կանոններով կամ ընդունված կարգով սահմանված ժամկետներում:

Սկզբնական չափում

Ֆինանսական գործիքների դասակարգումը սկզբնական ճանաչման պահին կախված է պայմանագրային պայմաններից և գործիքների կառավարման բիզնես մոդելից: Ֆինանսական գործիքները սկզբնապես չափվում են իրական արժեքով, և գործարքի հետ կապված ծախսումներն ավելացվում են այդ գումարին կամ նվազեցվում են դրանից, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների չափման դասեր

Ընկերությունն իր բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգում է ելնելով ակտիվների կառավարման բիզնես մոդելից և ակտիվի պայմանագրային պայմաններից՝ դրանք չափելով.

- ամորտիզացված արժեքով,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով,
- իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Ընկերությունն իր ներդրումները դասակարգում և չափում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով: Ընկերությունը կարող է ֆինասական գործիքները նախորոշել որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա վերացնում կամ էապես նվազեցնում է չափման կամ ճանաչման անհետևողականությունը:

Ֆինանսական պարտավորությունները, բացի փոխատվության հանձնառություններից և ֆինանսական երաշխավորությունների պայմանագրերից, չափվում են ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, եթե պահվում են առևտրական նպատակներով, ածանցյալ գործիքներ են կամ կիրառվում է իրական արժեքով նախարոշումը:

Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Ընկերությունը ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները և այլ ֆինանսական գործիքները չափում է ամորտիզացված արժեքով, եթե միաժամանակ բավարարվում են հետևյալ երկու պայմանները՝

– ֆինանսական ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու համար և
– ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Այդ պայմանների մանրամասները ներկայացված են ստորև.

Բիզնես մոդելի գնահատում

Ընկերությունն իր բիզնես մոդելը սահմանում է այն մակարդակի վրա, որը լավագույնս արտացոլում է, թե ինչպես է այն կառավարում ֆինանսական ակտիվների խմբերն իր բիզնես նպատակներն իրագործելու համար:

Բիզնես մոդելի գնահատման հիմքում ընկած են ողջամտորեն ակնկալվող սցենարները՝ առանց հաշվի առնելու «վատագույն դեպք» կամ «սթրեսային դեպք» սցենարները: Եթե սկզբնական ճանաչումից հետո դրամական հոսքերն իրացվում են Ընկերության սկզբնական ակնկալիքներից տարբերվող եղանակով, Ընկերությունը չի փոխում այդ բիզնես մոդելում պահվող մնացած ֆինանսական ակտիվների դասակարգումը, սակայն հետագայում հաշվի է առնում այդ տեղեկատվությունը նոր սկզբնավորված կամ նոր գնված ֆինանսական ակտիվները գնահատելիս:

Միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ հանդիսանալու գնահատում

Որպես դասակարգման գործընթացի երկրորդ քայլ, Ընկերությունը գնահատում է ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները՝ պարզելու համար, թե արդյոք դրանք բավարարում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ հանդիսանալու չափանիշները:

Այս գնահատման նպատակով «մայր գումար» հասկացությունը սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին և կարող է փոխվել ֆինանսական ակտիվի ժամկետի ընթացքում (օրինակ, եթե կան մայր գումարի մարումներ կամ հավելավճարի/զեղչի ամորտիզացիա):

Վարկային պայմանագրում, սովորաբար, տոկոսի ամենանշանակալի տարրերն են փողի ժամանակային արժեքի համար հատուցումը և պարտքային ռիսկը: Միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ հանդիսանալը գնահատելու համար Ընկերությունը կիրառում է դատողություններ և դիտարկում է համապատասխան գործոնները, օրինակ՝ արժույթը, որով արտահայտված է ֆինանսական ակտիվ, և ժամկետը, որի համար սահմանվում է տոկոսադրույքը:

Ի հակադրություն, պայմանագրային պայմանները, որոնց արդյունքում առաջանում է շատ աննշան ռիսկերին ենթարկվածություն կամ պայմանագրային դրամական հոսքերի փոփոխականություն, որոնք կապված չեն բազային վարկային պայմանագրի հետ, չեն առաջացնում պայմանագրային դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսի վճարումներ են: Այդպիսի դեպքերում ֆինանսական ակտիվը պետք է չափվի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերադասակարգում

Ընկերությունը չի վերադասակարգում իր ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ բացառիկ հանգամանքների, երբ Ընկերությունը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը: Ֆինանսական պարտավորությունները երբեք չեն վերադասակարգվում

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ակնկալվող պարտքային կորուստների գծով կորստի պահուստը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես նվազեցում ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից:

(ii) Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը (կամ, կիրառելի լինելու դեպքում, ֆինանսական ակտիվի մասը, կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի մասը) ապաճանաչվում է, երբ՝

- ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ իրավունքները կորցնում են իրենց ուժը,
- Ընկերությունը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու իրավունքը կամ պահպանում է այդ իրավունքը, սակայն պարտավորվում է այդ դրամական հոսքերն ամբողջությամբ և առանց էական ուշացումների փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրով և,
- Ընկերությունը կամ (ա) փոխանցել է ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները կամ (բ) ոչ փոխանցել և ոչ էլ պահպանել է ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունն այն դեպքում, երբ իր պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

Եթե գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է նույն վարկատուի նկատմամբ մեկ այլ պարտավորությամբ՝ նշանակալիորեն տարբեր պայմաններով, կամ եթե գոյություն ունեցող պարտավորության պայմանները նշանակալիորեն վերափոխվում են, այդպիսի փոխարինումը կամ վերափոխումը դիտարկվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում, իսկ համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

(iii) Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է զուտ գումարն միայն այն դեպքում, երբ Ընկերությունն ունի գումարները հաշվանցելու իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք և մտադիր է կամ մարել ֆինանսական ակտիվները և պարտավորությունները զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ: Եկամուտները և ծախսերը չեն հաշվանցվում շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ դա պահանջվում կամ թույլատրվում է որևէ հաշվապահական հաշվառման ստանդարտով կամ մեկնաբանությամբ և հատուկ բացահայտվում է Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում:

(զ) Արժեզրկում

Ընկերությունը ճանաչում է կորստի պահուստ ակնկալվող պարտքային կորուստների գծով շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող հետևյալ ֆինանսական գործիքների համար.

- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ,
- Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր:

Կորստի պահուստը չափվում է՝

- 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով՝ ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների մասը, որն առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից (1-ին փուլ), կամ
- ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով՝ ակնկալվող պարտքային կորուստներ, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ժամկետի ընթացքում (2-րդ փուլ և 3-րդ փուլ):

Ֆինանսական գործիքի համար կորստի պահուստը չափվում ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով, եթե այդ ֆինանսական գործիքի համար պարտքային ռիսկը նշանակալիորեն աճել է սկզբնական ճանաչումից ի վեր: Մյուս բոլոր գործիքների համարա ոոնց համար կորստի պահուստը չափվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով:

Ակնկալվող պարտքային կորուստները ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում պարտքային կորուստների հավանականությամբ կշռված գնահատականն են: Դրանք չափվում են որպես պայմանագրին համապատասխան Ընկերությանը հասանելիք դրամական հոսքերի և Ընկերության կողմից տարբեր ապագա տնտեսական սցենարների կշռումից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերության ներկա արժեք՝ զեղչված ակտիվի արդյունավետ տոկոսադրույքով:

(է) Կապիտալ

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկման ուղղակիորեն վերագրելի արտաքին ծախսերը, բացառությամբ բիզնեսի միավորման դեպքերի, սեփական կապիտալում արտացոլվում են որպես նվազեցում մուտքերից: Գումարը, որով ստացված հատուցման իրական արժեքը գերազանցում է թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքը, ճանաչվում է որպես լրացուցիչ կապիտալ:

(i) Չբաշխված շահույթ

Ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

(ii) Շահաբաժիններ

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն և նվազեցվում են սեփական կապիտալից հաշվետու ամսաթվի դրությամբ միայն այն դեպքում, եթե հայտարարվել են մինչև հաշվետու ամսաթիվը կամ հաշվետու ամսաթվին: Շահաբաժինները բացահայտվում են, եթե առաջարկվել են մինչև հաշվետու ամսաթիվը, կամ առաջարկվել կամ հայտարարվել են հաշվետու ամսաթվից հետո, բայց մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման համար հաստատման ամսաթիվը:

(iii) Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ

Այս պահուստում գրանցվում են իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումների իրական արժեքի փոփոխությունները:

(iv) Գլխավոր պահուստ

Այս պահուստը ձևավորվում է կանոնադրությամբ սահմանված չափով, բայց չպետք է պակաս լինի կանոնադրական կապիտալի 15 տոկոսից: Եթե պահուստը փոքր է կանոնադրությամբ սահմանված չափից, պահուստին հատկացումները կատարվում են շահույթից՝ առնվազն հինգ տոկոսի չափով, ինչպես նաև նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև տարբերությունից ստացված միջոցներից:

5. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2023թ.**	**31 դեկտեմբերի 2022թ.**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	94,358	24,673
Հանած՝ արժեզրկման գծով պահուստը	(12)	(24)
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**94,346**	**24,649**

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամական միջոցները և դրանց համարժեքները պահվում են B1 վարկանիշ ունեցող ֆինանսական կազմակերպությունում (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ B1): Դրամական միջոցների բոլոր մնացորդները դասված են 1-ին փուլ: Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի փոփոխությունների վերլուծությունը 2023թ. և 2022թ. համար ներկայացված է ստորև:

հազ. դրամ	
Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը առ 1 հունվարի 2022թ.	266
Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի փոփոխություններ	(242)
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	**24**
Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի փոփոխությունները	(12)
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**12**

6. Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2023թ.**	**31 դեկտեմբերի 2022թ.**
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	2,059,522	1,632,908
Հանած՝ արժեզրկման գծով պահուստը	(6,568)	(8,492)
Ընդամենը պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**2,052,954**	**1,624,416**

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները վերագրելի են B1 վարկանիշ ունեցող ֆինանսական կազմակերպություններին (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ B1): Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների բոլոր մնացորդները դասված են 1-ին փուլ: Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի փոփոխությունների վերլուծությունը 2023թ. և 2022թ. համար ներկայացված է ստորև:

հազ. դրամ	
Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը առ 1 հունվարի 2022թ.	4,766
Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի փոփոխություններ	3,716
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	**8,492**
Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի փոփոխությունները	(1,924)
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**6,568**

7. Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ

հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2023թ.**	**31 դեկտեմբերի 2022թ.**
Փայեր Ընկերության կողմից կառավարվող ֆոնդերում		
ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ պահպանողական կենսաթոշակային ֆոնդ	1,396,716	1,222,023
ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ հավասարակշռված կենսաթոշակային ֆոնդ	69,852	51,523
ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ կայուն եկամտային կենսաթոշակային ֆոնդ	53,973	48,060
Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումներ	**1,520,541**	**1,321,606**

Կենսաթոշակային ֆոնդերից յուրաքանչյուրը հիմնադրվել օրենսդրությամբ սահմանված կարգով և իր առևտրային գործունեությունն է իրականացնում ՀՀ-ում: Ֆոնդերը կատարում են ներդրումներ կապիտալի երկարաժամկետ աճ ապահովելու նպատակով և չեն ենթադրում էական մարժաներ: Ֆոնդերը ցուցակված չեն գործող շուկաներում: 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից կառավարվող բոլոր ֆոնդերի զուտ ակտիվների ընդհանուր արժեքը կազմում է 417,272,285 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 292,056,986 հազար դրամ):

ՀՀ օրենսդրության համաձայն՝ Ընկերությունը պարտավոր է կատարել առնվազն 1% ներդրում իր կողմից կառավարվող յուրաքանչյուր ֆոնդում, բացառությամբ այն դեպքերի, երբ Ընկերության ընդհանուր ներդումը ֆոնդում գերազանցում է 1,000,000 հազար դրամը: Նվազագույն ներդրումը չի կարող վերադարձվել մինչև ֆոնդի գործունեության դադարեցումը և լուծարումը:

Ընկերության առավելագույն կորուստները ֆոնդերի հետ կապված արտահայտվում են ֆոնդի փայերում կատարված ներդրումների և ֆոնդերի նկատմամբ պահանջների ընդհանուր գումարով:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն այդ ներդրումների գծով կուտակել է չիրացված օգուտի պահուստ 537,909 հազար դրամի չափով (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 349,038 հազար դրամ):

8. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

հազ. դրամ	Վարձակալ-ված գույքի բարելավում	Համակար-գիչներ	Փոխադրա-միջոցներ	Գրասենյակային սարքավորում և այլ հիմնական միջոցներ	Ոչ նյութական ակտիվներ, անավարտ պայմանագ-րեր	Ընդամենը
Սկզբնական արժեք						
Առ 31 դեկտեմբերի 2021թ.	27,734	231	19,000	24,785	9,346	81,096
Ավելացումներ	-	657	-	2,872	663	4,192
Օտարումներ/ դուրսգրումներ	(27,734)	-	-	(2,533)	-	(30,267)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**-**	**888**	**19,000**	**25,124**	**10,009**	**55,021**
Ավելացումներ	63,148	5,056	-	63,053	7,100	138,357
Օտարումներ/ դուրսգրումներ	-	(649)	-	(418)	-	(1,067)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	**63,148**	**5,295**	**19,000**	**87,759**	**17,109**	**192,311**
Մաշվածություն և ամորտիզացիա						
Առ 31 դեկտեմբերի 2021թ.	25,887	86	3,192	23,474	-	52,639
Մաշվածության և ամորտիզացիայի գումար	630	109	2,793	714	822	5,068
Օտարումներ/ դուրսգրումներ	(26,517)	-	-	(2,533)	-	(29,050)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**-**	**195**	**5,985**	**21,655**	**822**	**28,657**
Մաշվածության և ամորտիզացիայի գումար	3,753	993	3,002	4,513	1,415	13,676
Օտարումներ/ դուրսգրումներ	-	(415)	-	(317)	-	(732)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	**3,753**	**773**	**8,987**	**25,851**	**2,237**	**41,601**
Հաշվեկշռային արժեք						
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**1,847**	**145**	**15,808**	**1,311**	**9,346**	**28,457**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**-**	**693**	**13,015**	**3,469**	**9,187**	**26,364**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	**59,395**	**4,522**	**10,013**	**61,908**	**14,872**	**150,710**

9. Վարձակալություն

(i) Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

հազ. դրամ	
Սկզբնական արժեք	
Առ 1 հունվարի 2022թ.	73,257
Ավելացումներ	132,204
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	**205,461**
Պայմանագրի փոփոխություններ	(15,932)
Առ 31 դեկտեմբերի 2023	**189,529**
Կուտակված մաշվածություն	
Առ 1 հունվարի 2022թ.	(66,208)
Տարվա գումար	(30,476)
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	**(96,684)**
Տարվա գումար	(29,346)
Առ 31 դեկտեմբերի 2023	**(126,030)**
Հաշվեկշռային արժեք	
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	108,777
Առ 31 դեկտեմբերի 2023	**63,499**

(ii) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

հազ. դրամ	**2023թ.**	**2022թ.**
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների մաշվածության ծախս	(29,346)	(30,476)
Վարձակալության գծով պարտավորությունների գծով տոկոսային ծախս	(12,453)	(16,068)
Ընդամենը	**(41,799)**	**(46,544)**

(iii) Վարձակալության գծով պարտավորություններ

հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2023թ. Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ**
Ժամկետայնության վերլուծություն	
1 տարի	32,077
2 տարի	26,681
3 տարի	26,681
4 տարի	12,277
Ընդամենը վարձակալության գծով պարտավորություններ	**97,716**
Չվաստակած տոկոսներ	**(19,211)**
Վարձակալության գծով պարտավորությունների հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2023թ.	**78,505**

հազ. դրամ	**31 դեկտմբերի 2022թ. Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ**
Ժամկետայնության վերլուծություն	
1 տարի	40,985
2 տարի	36,259
3 տարի	30,863
4 տարի	30,863
5 և ավելի տարի	10,288
Ընդամենը վարձակալության գծով պարտավորություններ	**149,258**
Չվաստակած տոկոսներ	**(32,022)**
Վարձակալության գծով պարտավորությունների հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**117,236**

10. Շահութահարկ

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 18% (2022թ-ին՝ 18%): ՖՀՄՍ և ՀՀ հարկային օրենսդրության միջև տարբերությունները առաջացնում են ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի նպատակների համար օգտագործվող գումարների միջև: Հետաձգված շահութահարկը հաշվարկվում է 18% դրույքաչափով:

(ա) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

հազ. դրամ	**2023թ.**	**2022թ.**
Շահույթում կամ վնասում ճանաչված ընթացիկ շահութահարկ	493,689	355,546
Հետաձգված հարկի գծով օգուտ	(2,503)	(2,044)
Շահութահարկի գծով ծախս	**491,186**	**353,503**
Շահութահարկի համադրում		
Շահույթը մինչև շահութահարկով հարկումը	**2,575,890**	**1,854,206**
Շահութահարկ՝ հաշվարկված հարկի 18% դրույքաչափով	463,660	333,757
Կորուստ փոխարժեքային տարբերություններից	3,501	2,338
Չնվազեցվող ծախսեր	24,025	17,408
Շահութահարկի գծով ծախս հաշվարկված շահութահարկի 19.18% դրույքաչափով (2022թ-ին՝ 19.06%)	**491,186**	**353,503**

Ստորև ներկայացված է ժամանականվոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկը:

հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2023թ.**	**31 դեկտեմբերի 2022թ.**
Հետաձգված հարկային ակտիվներ/(պարտավորություններ), ներառյալ.		
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների	(11,430)	(19,580)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2	4
Չօգտագործված արձակուրդների պահուստ	1,533	1,293
Պարգևավճարների պահուստ	4,408	3,568
Այլ ակտիվներ	51	46
Այլ պահուստներ	1,440	-
Հիմնական միջոցներ	272	1,124
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,182	1,529
Վարձակալության գծով պարտավորությունների	14,131	21,102
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	**11,589**	**9,086**

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված և 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների հետաձգված հարկային ակտիվների համապատասխանաբար 2,503 հազար դրամ և 2,044 հազար դրամ փոփոխությունները ճանաչվել են շահույթում կամ վնասում:

11. Այլ ակտիվներ

հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2023թ.**	**31 դեկտեմբերի 2022թ.**
Այլ ֆինանսական ակտիվներ	**391,945**	**286,808**
Ստացվելիք կառավարման վճարներ	372,777	266,815
Այլ ստացվելիք գումարներ	19,449	20,246
Հանած՝ պահուստը	(281)	(253)
Այլ ոչ ֆինանսական ակտիվներ	**28,344**	**14,600**
Կանավճարներ	25,734	12,817
Այլ ոչ ֆինանսական ակտիվներ	2,610	1,783
Ընդամենը այլ ակտիվներ	**420,289**	**301,408**

Բոլոր այլ ակտիվները դասված են 1-ին փուլ: Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի փոփոխությունների վերլուծությունը 2023թ. և 2022թ. համար ներկայացված է ստորև:

հազ. դրամ	
Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը առ 1 հունվարի 2022թ.	215
Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի փոփոխություններ	38
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	**253**
Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի փոփոխությունները	28
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**281**

12. Կանոնադրական կապիտալ

2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գրանցված և ամբողջությամբ վճարված կանոնադրական կապիտալը կազմում է 800,000 հազար դրամ: Ընկերության կանոնադրության համաձայն՝ բաժնետիրական կապիտալը կազմված է 2,500 սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 320,000 դրամ անվանական արժեքով:

2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բաժնետերեն էին՝

Բաժնետեր	**Բաժնեմաս**	**%**
«ԱՄՈՒՆԴԻ-ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ԲԸ (Ֆրանսիա)	408,000	51 %
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ (Հայաստան)	392,000	49 %
Ընդամենը կանոնադրական կապիտալ	**800,000**	**100%**

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ուներ 2,080,281 հազար դրամ գումարով կուտակված շահույթ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,500,704 հազար դրամ գումարով կուտակված շահույթ):

2023թ. ապրիլի 28-ի Բաժնետերերի ժողովում Ընկերությունը 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա գործունեության արդյունքների հիման վրա հայտարարել էր 1,425,668 հազար դրամ շահաբաժիններ սովորական բաժնետոմսերի գծով (570,2 հազար դրամ մեկ բաժնետոմսի դիմաց) ներառյալ շահութահարկը: Շահութաբաժինները վճարվել են 2023թ. հունիսի 27-ին՝ 1,389,313 հազար դրամ ընդհանուր գումարով և վճարվել է 36,355 հազար դրամ գումարով շահութահարկ: 2022թ. ապրիլի Բաժնետերերի ժողովում Ընկերությունը 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա գործունեության արդյունքների հիման վրա հայտարարել էր 1,101,644 հազար դրամ շահաբաժիններ սովորական բաժնետոմսերի գծով (440.7 հազար դրամ մեկ բաժնետոմսի դիմաց) ներառյալ շահութահարկը:

13. Վճարվելիք գումարներ և հաշվեգրված ծախսեր

հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2023թ.**	**31 դեկտեմբերի 2022թ.**
Մասնագիտական ծառայությունների գծով վճարվելիք գումարներ	99,733	144,514
Վճարվելիք պահառուական վճարներ	23,640	24,493
Այլ վճավելիք գումարներ	25,785	26,913
Այլ ֆինանսական պարտավորություններ	**149,158**	**195,920**
Չօգտագործված արձակուրդների պահուստ	8,515	7,181
Պարգևավճարների պահուստ	24,490	19,820
Այլ պահուստներ	8,000	-
Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	**41,005**	**27,001**
Ընդամենը վճարվելիք գումարներ և հաշվեգրված ծախսեր	**190,163**	**222,922**

հազ. դրամ	**Չօգտագործված արձակուրդ**	**Հաշվեգված պարգևավճարներ**
Առ 31 դեկտեմբերի 2021թ.	**3,972**	**14,946**
Տարվա ընթացքում հաշվեգրված	14,376	19,820
Մարված	(11,166)	(14,946)
Առ 31 դեկտեմբերի 2022	**7,181**	**19,820**
Տարվա ընթացքում հաշվեգրված	23,392	24,490
Մարված	(22,058)	(19,820)
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**8,515**	**24,490**

14. Եկամուտ կառավարման վճարներից

հազ. դրամ	**2023թ.**	**2022թ.**
Կառավարվող ֆոնդեր		
ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ պահպանողական կենսաթոշակային ֆոնդ	3,761,262	2,832,206
ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ հավասարակշռված կենսաթոշակային ֆոնդ	65,035	51,116
ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ կայուն եկամտային կենսաթոշակային ֆոնդ	31,852	23,528
Ընդամենը եկամուտ կառավարման վճարների	**3,858,149**	**2,906,850**

15. Անձնակազմի գծով ծախսեր

հազ. դրամ	**2023թ.**	**2022թ.**
Աշխատակիցների հատուցումներ	247,561	152,342
Անձնակազմի գծով այլ ծախսեր	42,350	35,451
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	**289,911**	**187,793**

16. Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախսեր

հազ. դրամ	**2023թ.**	**2022թ.**
Ներդրումների կառավարման պատվիրակման վճար	316,350	232,320
Պահառուական/պետական դեպոզիտարիայի վճարներ	262,455	266,851
Ընդամենը միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախսեր	**578,805**	**499,171**

17. Վարչական և այլ ծախսեր

հազ. դրամ	**2023թ.**	**2022թ.**
Ֆոնդերի կառավարչական և հաշվապահական հաշվառման ծախսեր	118,518	88,848
Տեխնիկական ծրագրերի օգտագործման ծախսեր	90,919	80,359
Բարեգործություն	66,157	65,585
Ներկայացուցչական և գովազդի ծախսեր	58,934	43,376
Մաշվածության և ամորտիզացիայի գծով ծախսեր	43,022	35,544
Այլ ծախսեր	39,995	16,851
Հարկեր (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	36,288	5,469
Աշխատանքի արտապատվիրում	31,857	66,196
Մասնագիտական ծառայությունների գծով ծախսեր	25,630	16,080
Գործուղման ծախսեր	15,798	11,268
Հիմնական միջոցների վերանորոգման ծախսեր	8,795	6,502
Ապահովագրություն	6,851	4,024
Կապի և հաղորդակցության գծով ծախսեր	3,467	3,810
Պարտքային վնասի (հակադարձում)/ պարտքային կորուստների գծով ծախս	(1,908)	3,512
Մշակութային ծախսեր	1,465	1,574
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	1,006	2,241
Ընդամենը վարչական և այլ ծախսեր	**546,794**	**451,239**

Ընկերության 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտի արժեքը կազմում է 16,666,667 դրամ՝ առանց ԱԱՀ:

18. Հանձնառություններ և պայմանական դեպքեր

(ա) Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանաբար է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

(բ) Դատական հայցեր և ռիսկեր

Բնականոն գործունեության ընթացքում Ընկերության դեմ կարող են հարուցվել դատական հայցեր և ներկայացվել բողոքներ, Ընկերության գործունեության վրա կարող են ազդեցություն ունենալ օրենսդրական միջավայրի անբարենպաստ փոփոխությունները: Ղեկավարությունը գտնում է, որ վերջնական պատասխանատվության չափը, եթե այդպիսին լինի, որը կարող է առաջանալ հնարավոր

կամ հարուցված հայցերի և բողոքների արդյունքում, էական բացասական ազդեցություն չի ունենա Ընկերության ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա և քիչ հավանական է, հետևաբար, այս ֆինանսական հաշվետվություններում համապատասխան պահուստ չի ձևավորվել:

(գ) Կառավարվող ֆոնդերում համաներդրում ունենալու հանձնառություն

Կանոնակարգի պահանջների համաձայն՝ Ընկերությունը պետք է ունենա 1% համաներդրում իր կողմից կառավարվող կենսաթոշակային ֆոնդերում, եթե ֆոնդի զուտ ակտիվների արժեքը չի գերազանցում 1,000,000 հազար դրամը, և 0.15%՝ ներդրումային ֆոնդում: Այս և այլ կանոնակարգային և նորմատիվ պահանջները ենթակա են մշտադիտարկման ՀՀ ԿԲ-ի կողմից: 2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը համապատասխանում է վերը նշված կանոնակարգի պահանջներին:

19. Ֆինանսական գործիքների իրական արժեք

Ընկերության՝ շարունակական հիմունքով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքը

Ընկերության ներդրումները ֆոնդերի փայերում չափվում են իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Գործող շուկայում առքուվաճառքի չենթարկվող՝ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումների իրական արժեքը գնահատվում է կենսաթոշակային հիմնադրամների զուտ ակտիվների արժեքի հիման վրա:

հազ. դրամ	**2-րդ մակարդակ**	**Ընդամենը**
Առ 31 դեկտեմբերի 2023թ.		
Ֆինանսական ակտիվներ		
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումներ	1,520,541	**1,520,541**
Առ 31 դեկտեմբերի 2022թ.		
Ֆինանսական ակտիվներ		
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումներ	1,321,606	**1,321,606**

Ընկերության՝ շարունակական հիմունքով իրական արժեքով չչափվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքը (որոնց համար, սակայն, պահանջվում են իրական արժեքի բացահայտումներ)

Հաշվի առնելով շարունակական հիմունքով իրական արժեքով չչափվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների կարճաժամկետ բնույթը՝ ղեկավարությունը գտնում է, որ դրանց հաշվեկշռային արժեքները մոտավորապես համապատասխանում են իրական արժեքներին:

20. Կապիտալի ռիսկի կառավարում

Ընկերությունը կառավարում է իր կապիտալը գործունեությունն անընդհատության հիմունքով շարունակելու իր կարողությունն ապահովելու համար՝ միաժամանակ նպատակ ունենալով առավելագույնի հասցնել շահառուների եկամուտները: Ընկերության կապիտալը ներառում է սեփական կապիտալը, որը բաղկացած է թողարկված կապիտալից, չբաշխված շահույթից, ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստից և գլխավոր պահուստից, որոնք բացահայտվում են սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունում: Ընկերության կապիտալի ռիսկի կառավարման քաղաքականությունն, ընդհանուր առմամբ, մնացել է անփոփոխ է 2023թ. և 2022թ. ընթացքում:

Ընկերության կապիտալի համարժեքության ցուցանիշը վերահսկվում է օգտագործելով, ի թիվս այլ միջոցների, ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված նորմատիվները: ՀՀ ԿԲ-ի կանոնակարգ 10/02-ի համաձայն՝ ընդհանուր կանոնադրական կապիտալի նվազագույն չափը չպետք է պակաս լինի 500,000 հազար դրամից՝ հաշվարկված միջին օրական կտրվածքով օրացուցային ամսվա համար:

21. Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ռիսկի ենթարկվելը ֆինանսական գործունեության անբաժանելի մասն է, և գործառնական ռիսկերը գործունեության անխուսափելի հետևանքն են: Ընկերության նպատակն է ապահովել ռիսկերի և օգուտների միջև համապատասխան հավասարակշռությունը և նվազագույնի հասցնել անբարենպաստ ազդեցությունն Ընկերության ֆինանսական վիճակի վրա:

Ընկերության ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է հայտնաբերել և վերլուծել ռիսկերը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափերը և հսկողության համակարգը և արժանահավատ ու արդի տեղեկատվական համակարգերի միջոցով վերահսկել ռիսկերը և սահմանաչափերի պահպանումը:

Ընկերությունը պարբերաբար վերանայում է ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը՝ շուկայի, ծառայությունների և փորձի փոփոխություններն արտացոլելու համար:

Իր գործունեության ընթացքու Ընկերությունը ենթարկվում է պարտքային, իրացվելիության և շուկայական ռիսկերին: Ստորև ամփոփ կերպով ներկայացված են այդ ռիսկերի կառավարման քաղաքականությունները:

(ա) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական կորուստ կրելու ռիսկն է, երբ հաճախորդը չի կատարում իր պայմանագրային պարտականությունները:

Ընկերությունը հաշվարկում է ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ՝ հիմք ընդունելով ակտիվի ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստները:

Ստորև ներկայացված է ակտիվների հետ կապված պարտքային ռիսկին ենթարկվածությունը 2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	31 դեկտեմբերի 2023թ.	**31 դեկտեմբերի 2022թ.**	**Երկիր**	**Վարկանիշ**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	94,346	24,649	Հայաստան	B1
Ժամկետային ավանդներ	2,052,954	1,624,416	Հայաստան	B1
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	1,520,541	1,321,606	Հայաստան	Վարկանիշ չունեցող
Այլ ֆինանսական ակտիվներ	391,945	286,808	Հայաստան	Վարկանիշ չունեցող
	4,059,786	**2,970,671**		

Վարկանիշները հիմնված են «Moody’s» գործակալության վարկանիշային համակարգի վրա:

(բ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Ընկերությունը չի կարողանա կատարել իր պարտականությունները սահմանված ժամկետներում սովորական կամ չկանխատեսված իրավիճակներում:

Ընկերության իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտականությունները սահմանված ժամկետներում կատարելու համար, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հասանելիությունը: Ընկերությունն ունի բարձր իրացվելի ակտիվների պորտֆել, որը կարելի է հեշտությամբ իրացնել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում:

Ստորև ներկայացված են ֆինանսական պարտավորությունների մինչև մարումը մնացած պայմանագրային ժամկետները հաշվետու ամսաթվի դրությամբ: Ներկայացված են համախառն և չզեղչված գումարները, որոնք ներառում են հաշվարկված տոկոսների վճարումները:

31 դեկտեմբերի 2023թ.

հազ. դրամ	**Հաշվեկշռային արժեք**	**Ընդամենը**	**Մինչև 1 ամիս**	**1-6 ամիս**	**6-12 ամիս**	**1-5 տարի**	**Անժամկետ**
Ֆինանսական պարտավորություններ							
Այլ ֆինանսական պարտավորություններ	149,158	149,158	149,158	-	-	-	-
Վարձակալության գծով պարտավորություններ	78,505	97,716	2,994	15,742	14,111	64,869	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**227,663**	**246,874**	**152,152**	**15,742**	**14,111**	**64,869**	**-**

31 դեկտեմբերի 2022թ.

հազ. դրամ	**Հաշվեկշռային արժեք**	**Ընդամենը**	**Մինչև 1 ամիս**	**1-6 ամիս**	**6-12 ամիս**	**1-5 տարի**	**Անժամկետ**
Ֆինանսական պարտավորություններ							
Այլ ֆինանսական պարտավորություններ	195,920	195,920	195,920	-	-	-	-
Վարձակալության գծով պարտավորություններ	117,236	187,445	2,704	13,520	21,779	149,442	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**313,156**	**383,365**	**198,624**	**13,520**	**21,779**	**149,442**	**-**

(գ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն Ընկերության ֆինանսական գործիքների իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների, օրինակ՝ տոկոսադրույքների և արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով:

(i) Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը առաջանում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական գործիքների գծով ապագա դրամական հոսքերի կամ վերջիններիս իրական արժեքի վրա: 2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի ունեցել փոփոխական տոկոսադրույքով ֆինանսական ակտիվներ կամ պարտավորություններ:

(ii) Արժութային ռիսկ

Արժութային ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են այն արժույթները, որոնցով 2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունի էական արժութային դիրքեր՝ ոչ առևտրային դրամական ակտիվների և պարտավորությունների և կանխատեսվող դրամական հոսքերի գծով: Վերլուծությամբ հաշվարկել է ՀՀ դրամի նկատմամբ արտարժույթի փոխարժեքի ողջամիտ հնարավոր փոփոխության ազդեցությունը եկամտի վրա՝ ենթադրելով, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ: Աղյուսակի բացասական գումարներն արտացոլում են զուտ նվազումը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ սեփական կապիտալում պոտենցիալ, իսկ դրական գումարները՝ պոտենցիալ զուտ աճը:

31 դեկտեմբերի 2023թ.

հազ. դրամ	**ՀՀ դրամ**	**Եվրո**	**ԱՄՆ դոլար**	**Ընդամենը**
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	92,708	1,447	191	94,346
Բանկային ավանդներ	2,052,954	-	-	2,052,954
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումներ	1,520,541	-	-	1,520,541
Այլ ֆինանսական ակտիվներ	372,496	19,449	-	391,945
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ	**4,038,699**	**20,896**	**191**	**4,059,786**
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ				
Այլ ֆինանսական պարտավորություններ	137,572	11,586	-	149,158
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	**137,572**	**11,586**	**-**	**149,158**
Զուտ դիրքը	**3,901,127**	**9,310**	**191**	**3,910,628**

31 դեկտեմբերի 2022թ.

հազ. դրամ	**ՀՀ դրամ**	**Եվրո**	**ԱՄՆ դոլար**	**Ընդամենը**
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	20,972	3,603	74	24,649
Բանկային ավանդներ	1,049,716	250,769	323,931	1,624,416
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումներ	1,321,606	-	-	1,321,606
Այլ ֆինանսական ակտիվներ	266,562	20,246	-	286,808
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ	**2,658,856**	**274,618**	**324,005**	**3,257,479**
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ				
Այլ ֆինանսական պարտավորություններ	329,490	8,105	-	337,595
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	**329,490**	**8,105**	**-**	**337,595**
Զուտ դիրքը	**2,329,366**	**266,513**	**324,005**	**2,919,884**

Ստորև ներկայացված է համապատասխան փոխարժեքների ողջամտորեն հնարավոր փոփոխությունների հետևանքով 2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունների նկատմամբ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի զգայնության վերլուծությունը՝ ենթադրելով, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ

հազ. դրամ	**2023թ.**		**2022թ.**	
	Շահույթ կամ վնաս/ սեփական կապիտալ		**Շահույթ կամ վնաս/ սեփական կապիտալ**	
	Աճ	**Նվազում**	**Աճ**	**Նվազում**
Եվրոյի փոխարժեքի 20% փոփոխություն (2022թ-ին՝ 20%)	1,862	(1,862)	53,303	(53,303)
ԱՄՆ դոլարի փոխարժեքի 20% փոփոխություն (2022թ-ին՝ 20%)	38	(38)	64,801	(64,801)

Այլ շուկայական գնային ռիսկեր

Ընկերությունը ենթարկվում է գնային ռիսկերի ֆոնդերում փայերի հետ կապված: Ստորև ներկայացված զգայնության վերլուծությունը հիմնված է հաշվետու ժամանակաշրջանի վերջում փայերի հետ կապված գնային ռիսկերին ենթարկվածության վրա:

Եթե մեկ փայի արժեքն աճեր/նվազեր 5%-ով, 2023թ. սեփական կապիտալը կաճեր/կնվազեր 76,027 հազար դրամով իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությունների արդյունքում (2022թ. սեփական կապիտալը կաճեր/կնվազեր 66,080 հազար դրամով):

22. Կապակցված կողմեր

ՀՀՄՍ 24 *«Կապակցված կողմերի բացահայտումներ»* համաձայն՝ կողմերը համարվում են կապակցված, եթե կողմերից մեկը հնարավորություն ունի հսկել մյուս կողմը կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուս կողմի վրա՝ վերջինիս կողմից գործառնական և ֆինանսական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով Ընկերության կապակցված կողմերն են նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից հսկվող կազմակերպությունները: Ընկերության մայր ընկերությունն է «ԱՄՈՒՆԴԻ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ԲԸ (Ֆրանսիա): Ընկերության վերջնական հսկող կողմն է հանդիսանում SAS RUE LA BOETIE:

Ընկերությունն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործարքներ կապակցված կողմերի հետ:

Ստորև ներկայացված են կապակցված կողմերի հետ գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և այդ գործարքների գծով տարվա եկամուտը և ծախսը:

(ա) Ընկերության կողմից կառավարվող կենսաթոշակային ֆոնդեր

հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2023թ.**	**31 դեկտեմբերի 2022թ.**
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն		
Փայեր Ընկերության կողմից կառավարվող ֆոնդերում	1,520,541	1,321,606
Ստացվելիք կառավարման վճարներ	372,777	266,815

հազ. դրամ	**2023թ.**	**2022թ.**
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն		
Եկամուտ կառավարման վճարներից	3,858,149	2,906,850

(բ) Այլ կապակցված կողմեր

	2023թ.			2022թ.		
	Մայր ընկերություն	**Նշանակալի ազդեցություն ունեցող կազմակերպություն**	**Այլ կապակցված կողմեր**	**Մայր ընկերություն**	**Նշանակալի ազդեցություն ունեցող կազմակերպություն**	**Այլ կապակցված կողմեր**
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	94,346	-	-	24,649	-
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	2,052,954	-	-	1,624,416	-
Այլ ակտիվներ	-	19,449	-	2 450	17,796	-
Մասնագիտական ծառայությունների համար վճարվելիք գումարներ	(89,260)	-	(10,473)	(80,809)	-	(63,705)
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն						
Տոկոսային և նմանատիպ եկամուտ	-	121,328	-	-	92,664	-
Եկամուտ ֆինանսական խորհրդատվությունից	14,177	-	10,713	9,932	-	10,314
Աշխատանքի արտապատվիրում	(31,857)	-	-	(66,196)	-	-
Վարչական և այլ ծախսեր	-	-	(219,198)	-	-	(171,448)
Ներդրումների կառավարման պատվիրակման վճար	(316,350)	-	-	(232,320)	-	-

Առանցքային ղեկավար անձնակազմի վարձատրությունը բաղկացած է 176,193 հազար դրամ գումարով (2022թ-ին՝ 86,553 հազար դրամ) կարճաժամկետ հատուցումներից և ներառված է անձնակազմի գծով տարվա ծախսերում:

23. Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների համադրում

			Ոչ դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ		
հազ. դրամ	**1 հունվարի 2023թ.**	**Մուտքեր / (մարումներ) - դրամական հոսքեր**	**Տոկոսային ծախս**	**Ճշգրտումներ փոփոխությունների հետևանքով**	**31 դեկտեմբերի 2023թ.**
Վարձակալության գծով պարտավորություններ	**117,236**	**(35,252)**	**12,453**	**(15,932)**	**78,505**

			Ոչ դրամական հոսքերի հետ կապված փոփոխություններ		
հազ. դրամ	**1 հունվարի 2022թ.**	**Մուտքեր / (մարումներ) - դրամական հոսքեր**	**Տոկոսային ծախս**	**Ճշգրտումներ փոփոխությունների հետևանքով**	**31 դեկտեմբերի 2022թ.**
Վարձակալության գծով պարտավորություններ	**7,959**	**(38,004)**	**16,068**	**131,213**	**117,236**

24. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ գործում են 2023թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և թույլատրվում է այդ ստանդարտների վաղաժամ կիրառումը: Այնուամենայնիվ, այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Ընկերությունը վաղաժամ չի կիրառել նոր կամ փոփոխված ստանդարտները:

Ստորև ներկայացված նոր և փոփոխված ստանդարտներն ըստ ակնկալիքների նշանակալի ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- Վարձակալության գծով պարտավորությունը վաճառքի և հետադարձ վարձակալություն գործարքների դեպքում (ՖՀՄՍ 16-ի փոփոխություններ)
- Փոխանակման հնարավորության բացակայություն (ՀՀՄՍ 21-ի փոփոխություններ)
- Մատակարարների ֆինանսավորման պայմանավորվածություններ (ՀՀՄՍ 7-ի և ՖՀՄՍ 17-ի փոփոխություններ)
- Պարտավորությունների դասակարգում ընթացիկ և ոչ ընթացիկ դասերի և կովենանտներ ունեցող ոչ ընթացիկ պարտավորություններ (ՀՀՄՍ 1- փոփոխություններ)